

քիչ հեռի, տան մը հիմերուն պեղումներու ժամանակ, գտնուեցաւ գեղակերտ մողայիք մը, հայկական արձանագրութեամբ: Տեղը ուր գտնուած են այս յիշատակարանը և ուրիշ հնութիւնք, ըստ հնագիտաց, եզրն է ա՛յն վաղնջական մեծ պողոտային որ կը տանէր Ծովային Կեսարիա: Նոյն տեղւոյն մօտերը կը բարձրանար յաղթական կամարը՝ ի պատիւ Աղբիւնոս կայսեր՝ որ երուսաղէտը վերածած էր հռոմէական հաղթավայրի: Յիշեալ կամարին լատին արձանագրութեամբ բեկորները, ինչպէս նոյն կայսեր մօրմարեայ պատկազարդ գլուխը գտնուած են նոյն տեղերը: Ինչպէս հռոմէական շրջանին, նոյնպէս քրիստոնէական առաջին դարերուն, մողայիքներով և մեռելական մատուռներով զարդարուած էր այս յաղթական կամարին մօտ (ՏԵՍ Jerusalem Nouvelle, T. II էջ 35-39): Երուսաղէտի հիւսիսային կողմի վերոգրեալ հայկական մողայիքի հրջանիկ գիւտը կը մզէ մեզ հաւանօրէն ընդունելու թէ Ս. Պողիկոսոսի վանքը շինուած է քաղաքին լաւագոյն մէկ պողոտային գլուխը, հռոմէական և քրիստոնէական յիշատակարանաց մօտիկ: Այս հիւսնալի մողայիքի գիւտին պատմութեան մանրամասնութեանց մէջ չեմ մտներ. այդ մասին ընդարձակ նկարագրութիւններ կան հայ և եւրոպական հրատարակութեանց մէջ. միայն պիտի յիշեմ քանի մը մասնաւոր կէտեր: Պաղեստինի հնախօսութեանց վերաբերեալ պարբերականի մը մէջ կը կարդանք (ՏԵՍ Palestine Exploration Fund, 1894-895) թէ հայկական մողայիքի տեղւոյն պեղումները կատարել տալու գործը պետական որոշումով յանձնուած է ծանօթ հնագէտ Dr. Blissի, որուն տեղեկադրէն, ինչպէս նաև գերմանացի գիտնական Herr Von Schickի մասնաւոր տեղեկատուութիւնէն կը հասկցուի թէ այս մողայիքը շինուած է մարգկային ոսկորներով լեցուն քարայրի մը վրայ, ունեցած է մեռելական մատուռ մը, ինչպէս յայտնի եղած է վիւստակ պատերու մնացորդներէն. նոյն տեղը գտնուած են նաև քանդակազարդ խոյակներ, հողէ կանթեղներ, ապակեայ շիշեր. բաց աստի մողայիքէն 25 ոտք հեռի տեղ մը գտնուած է մարմարեայ խաչքար մը, որ պեղումներու ժամանակ կտրտուած է. կտրտուանքը իրար բերուած ու կարգացուած են հայերէն գիրեր. խաչին ձևն ու քանդակներն ալ հայկական են: Վերոյիշեալ երկու գիտնականները կը պնդեն թէ այս հայկական մողայիքը ունի միւսնոյն արուեստը և յօրինուածքը: